Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի դպրոցական փուլի - 2025-2026 ուստարի
10-րդ դասարան Տևողությունը 90 րոպե

**1. Ո՞ր շարքում է բաց թողնված միևնույն տառը:**
1. նախ-րե, -թել, վաղ-րդայն, վառ-դ
2. առ-նչվել, առ-նթեր, ընկ-րկել, ակ-նկոր
3. բար-ացակամ, եղ-ամ, ման-ակ, սյուն-ակ
4. խարխա-ել, կա-ույր, հա-շտակել, հղ-անալ

**2. Ո՞ր շարքում է բաց թողնված միևնույն տառը:**
1. քաշկռտու-, անհար-ի, քողտի-, վարա-իչ
2. ան-ացուպ, հար-աքանդակ, կր-սեր, հրացայ-
3. կ-կել, սրդողա-, ձվա-եղ, որ-կալ
4. մա-թանք, պ-պջակ, դժո-ք, փ-ձուկ

**3. Ո՞ր շարքում է բաց թողնված միևնույն տառ(եր)ը:**
1. անպատե-, խոտ-արք, դազգա-, խոնար-ել
2. ա-բավ, զա-բիկ, սուսա-բար, բա-բիշ
3. ք-թմնջյուն, խ-չակ, փ-փ-աղեզ լպ-ծուն
4. փ-փ-ալ, բազմատա-, տա-որոշել, մ-կահավ

**4. Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում անջատ:**
1. տնից(տուն), լույս(ընծայում), մինչև(իսկ), ոչ(ոք)
2. բերնե(բերան), քարե(դար), քիթ(քթի), մի(երկու)
3. առ(ձեռն), հաստ(աղի), թել(պանիր), ի(փառս)
4. ըստ(որում), մի (քանի), վառ(կանաչ), դեմ(դիմաց)

**5. Ո՞ր շարքի բոլոր հատուկ անունների երկրորդ բաղադրիչներն են գրվում փոքրատառով:**
1. ՎԻՆՍԵՆԹ ՎԱՆ ԳՈԳ, ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ, ՄՈՒՇԵՂ ՍՊԱՐԱՊԵՏ
2. ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ, ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ, ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
3. ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆ, ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ
4. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱԼԱՏ, ԿՈՒԿԻ ԿՂԶԻՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՎԳՅԱՆ ԱԽՈՌ

**6. Ո՞ր շարքի բոլոր բառերում սղում կա:**
1. ալրաղաց, կապտուկ, թշնամություն
2. հոգատար, հովվուհի, պատանյակ
3. թանձրամիտ, բնավեր, զուգերգ
4. առնչվել, սանրել, հանրային

**7. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են հոմանիշներ:**
1. գուղձ-հողակոշտ, ակաղձուն-լեցուն, մարմաջ-տենչ
2. ծավի-լուրթ, մույկ-ոտնաման, անքթիթ-սևեռուն
3. հակոտնյա-ներհակ, բուսազուրկ-լերկ, ինչք- գույք
4. հայհոյանք-լուտանք, ձաղկել-նախշազարդել, շեղջ-կույտ

**8. Նշի՛ր այն շարքը, որի բոլոր բառերը համանուններ ունեն:**
1. լողակ, ակ, անգամ, վայել
2. կատար, հարել, ծես, կապար
3. գայլուկ, գրեր, ասպարեզ, թև
4. նոթեր, լեռնապար, հոն, պարեն

**9. Ո՞ր շարքում են միայն որպես դարձվածք գործածվող բառակապակցությունները:**
1. զենքերը վայր դնել, գետինը մտնել, ճամփա պահել,
2. կրակի միջով անցնել, հոգին հանել, գրպանը դատարկ
3. նեղություն տալ, իրեն հավաքել, հոգու հետ խաղալ
4. հեքիաթներ պատմել, մտքի թելը կտրվել, դուռը ցույց տալ

**10. Ո՞ր շարքում են միայն բարդածանցավոր բառերը:**
1. միջնադար, սառցադաշտ, ակնահաճո, խցանահան
2. եղեռնապատում, բազմատեսակ, անձեռակերտ, եսակենտրոն
3. աստղազնաց, քարհանք, հյուսիսարևելյան, ապօրինի
4. գետեզրյա, թռչնորս, տրամաբանություն, ամենաշքեղ

**11.Պնդումներից ո՞րն է սխալ:**
1.Միջին կամ կիլիկյան հայերենի շրջանը ընդգրկում է XII-XVI դարերը:
2.Հնդեվրոպական լեզվաընտանիքը ներառում է ինչպես կենդանի, այնպես էլ մեռած լեզուներ:
3. Ծագումնաբանորեն մերձակից լեզուները ցեղակից լեզուներ են:
4. Լեզուների ցեղակցությունը դրսևորվում է միայն քերականական իրողություններում:

**12.Ո՞ր շարքում այլաձև հոլովման պատկանող բառ կա:**
1. այգի, տուն, ժամանակ, ամառ
2. սյուն, ուսում, առավոտ, մանուկ
3. դասընկեր, աղջիկ, հայր, կաղին
4. վայրկյան, տիկին, ձմեռ, անուն

**13. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**
1. Նիստի օրակարգում քննարկվեցին առաջիկա միջոցառման կազմակերպական հարցերը:
2. Դատարանի որոշմամբ բռնագրավվեց նրա ողջ ունեցվածքը:
3.Սարերից հոսող կարկաչյուն աղբյուրները միահյուսվում, դառնում են գետ ու գետակ:
4. Արամից բոլորը շատ գոհ են, որովհետև լավ է վերաբերվում թե՛ մեծերին, թե՛ փոքրերին:

**14. Ո՞ր շարքում են միայն նյութական խոսքի մասերը:**
1. վերջին, մինչ, բազմիցս, այսինքն, բոլորը
2. հայցորդ, հանուն, հնօրյա, սավառնել, թեև
3. ստորոտ, առթիվ, իհարկե, հաճախակի
4. հնգյակ, ամենքը, քառակի, անըստգյուտ

**15.Ո՞ր պնդումն է ճիշտ:**
1. Որակական ածականների մեծ մասը ունի համեմատության աստիճաններ:
2. Հատկացուցիչը արտահայտվում է միայն գոյականով:
3. Բայերն ըստ կազմության լինում են պարզ, բարդ, ածանցավոր և բարդածանցավոր:
4. Բոլոր վերաբերականները տրոհվում են ստորակետով:

Ուշադրություն: 16-ից 20-րդ առաջադրանքների պատասխանների թվերը նշել աճման կարգով:

**16. Նախադասություններից որո՞նք են գրված միջին հայերենով:**
1. Կարմիր ծաղիկ մը զարունի Առտու մը ինծի նվիրեցիր:
2. Ես ան հաւերուն էի, որ գետինըն կուտ չուտեի...
3. Արդարությո՛ւն, քեզ մոռնա՛լ, Երբե՛ք, այլ սուր մ· լլալ, սրտեր քեզ մուտ տալ:
4. Լուսի՛ն, պարծենաս, ասես. Լուս կու տամ ես աստընվորիս:
   Ահա՛ հողեղէն լուսին ի զըրկիս ՛ ւ երեսն երեսիս...
5. Կարմի՛ր ճերմակ երես, ամ քանի՞ դու զիս պիտ էրես:
6. Միրտս ուզում էր պատռի, որ էս էրեխանց ձեռքն էլ ինչ հայի զիրք տալիս էի, չէին հասկանում:
7. Մայր Արաքսի ափերով Քայլամոլոր զընում եմ, Հին-հին դարուց հիշատակ Այյաց մեջը պըտրում եմ:

**17. Տրված բայաշարքում քանի՞ պարզ ժամանակաձև կա:**
Զգո՛ւյշ եղիր, չպետք է բարկացնի, կարդում եք, մոտեցե՛ք, հեռացել եմ, կխոստովանի, մոտենալու էին, պիտի թողնես գնաս, չի վերցնի, մոռանալ չտվեցի, տեղը չէր գտնում, չպիտի հեռանայիք, բերել էինք, օգնեմ, վե՛րջ տվեք, հիանում են, մի՛ վեր կաց, տարա-բերեցի:

**18.Նշի՛ր այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**
1. Ռռնում էր ահեղ քամին և հսկա սաղարթներով ծառերը ճռնչալով տապալվում էին մեկը մյուսի հետևից:
2. Ծովը թվում էր՝ ուր որ է կուլ կտա հսկա ալիքների վրա տարուբերվող նավը:
3.Հայտնի է, որ չորրորդ դարից սկսած՝ հայերը զինեմոլներին մեկուսացրել են հասարակությունից:
4. Շոգ միջօրեին ամենքը պատսպարվել էին իրենց օթևաններում, իսկ Նոյը սաղարթախիտ կաղնու տակ նստած՝ սառը գինի էր վայելում:
5.Կարմիր կտուցները բացած՝ թռչնի նորելուկ ձագերը սկսեցին կափկափել. հավանաբար քաղցած էին:
6.Միջերկրական ծովի ափին շոգից ասես շնչահեղձ էր լինում եգիպտական չնաշխարհիկ քաղաքը՝ Ալեքսանդրիան:

**19. Նշի՛ր այն շարքերի համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանականական վերլուծության սխալ մեկնաբանություն կա:**

Փոշի էր բարձրանում գետնից, ու թվում էր՝ արագավազ ձիերի սմբակները չեն դիպչում գետնին, և պայտերը զրնգում էին օդի մեջ:
1. փոշի –ու հոլովում, ուղղական հոլով
2. բարձրանում էր-պարզ բայ, բաղադրյալ ժամանակաձև
3. գետնից- ի արտաքին հոլովում, բացառական հոլով
4. թվում էր- անկանոն բայ, սահմանական եղանակ
5. ձիերի – ի արտաքին հոլովում, սեռական հոլով
6. չեն դիպչում- սոսկածանցավոր բայ, անկատար ներկա

**20.Նշի՛ր այն նախադասությունների համարները, որոնցում ընդգծված շարահյուսական անդամների պաշտոնները ճիշտ են նշված:**
1. Այդ լեռնային ճանապարհը հատում էր **Արաքսը**՝ ռուս-պարսկական սահմանը: (բացահայտիչ)
2. Հարսը **սրտաբուխ** նրան ընծայեց իր արծաթե գոտին՝ որպես հիշատակ: (որոշիչ)
3. Ի՜նչ **գեղեցիկ** է արևմտահայերենը՝ ջութակի ձայների նման թրթռուն, թեթև, վերասլաց (ստորոգելի)
4. Այդ հեռավոր ու ամայի ափերին նրա համար անակնկալ էր հայրենակցի **հանդիպելը**: (ենթակա)
5. Փարատի՛ր խպառ ամենապարզն **տխրությունն** իմ այս նշավակելի: (ուղիղ խնդիր)
6. Գյուղից քիչ հեռու՝ անտառի **բացատում**, չոր ճյուղերի կոտրատվելու ձայն լսեցի:
(տեղի պարագա)